ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 774 - Ա

ՎԻԿՏՈՐՅԱ ԱՅԴԻՆՅԱՆԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 23-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածով՝

1. Թույլատրել փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի խորհրդական Վիկտորյա Այդինյանին մասնակցելու 2024 թվականի նոյեմբերի 11-ից մինչև 2025 թվականի հուլիսի 15-ը ներառյալ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Օքսֆորդի համալսարանի Բլավատնիկի կառավարման դպրոցում հանրային կառավարման մագիստրոսական ծրագրին՝ առանց աշխատավարձի պահպանման:

2. Ընդունել ի գիտություն, որ վերապատրաստման մասնակցության հետ կապված ծախսերը փոխհատուցվելու են «Չիվնինգ» կրթաթոշակի միջոցներով:

3. Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի խորհրդականին՝ աշխատանքի ներկայանալուց հետո տասնօրյա ժամկետում Վարչապետի աշխատակազմ ներկայացնել ուսումնասիրված նյութի և հետագա աշխատանքային գործունեության ընթացքում դրա կիրառելիության վերաբերյալ հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

07.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ